

ՀԵՐԵՎԵԱԼ

Herbivale



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ԱԶԳԱՅԻՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅԵՐԻ ՏԱՐԻ  
1906

3 ՄԱՅԻՍ ԹԻ 19

ԽՄԱԿԻՐ-ՏՆՕՐԵՆ

Մ.ՄԱՍՏՈՒՐԵԱՆ ՈՐԴՈՒ

ԻԶՄԻՐ

MAH HASGALIAN GRS Smyrna

## ԲՈՎԱՆԻՒԱԿՈՒԹԻՒՆ

Յ. ԱԼՓԻԱՐ	Իսկիւտարցի Պիւռանժէն	449
»	Ի Բերանէ Քուլմէ	454
ՏՕԲԹ. Մ. ՎԱԶԷ	Նամակներ Աթէնքէ	457
Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Այօրբ.	461
ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ	Ուխտաւորները	462
Կ. ՆՈՒԱՍԱՐԴ	Արի մն Քաղտնիքները	465
ԹՂԹ. Կ. ՊՈԼՍՈՅ	Պոլոյ կենանը	468
Գ. ՊՈՒՊԼԻ	Քաղաքական	470
	Լրաշաղ	471

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

ՏԻԱՐՊԷՔԻՐԻ Թերթիս գործակալութիւնը յանձնուած է Տիար Գարեգին Պարսամեանի՝ բաժանորդարուիլ փախարոց կրնան զիմել յիշեալն:

Միանգամ ընդ միշտ կ'յայտարարենք մեր Մեծ. բաժանորդներուն և Գործակալներուն թէ ասկեց վերջ, պակաս թիւեր ստանալ փափակողք մնչև որ անոնց զինք չզրկեն նկատողութեան շլիտի անուրիս իրենց յանձնարարութիւնները:

1903 ի 1 և 2 թիւերը ս'ի որ սնի և ծախել կուզէ, կրնայ զիմել Խժրագրատունս:

## ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

# ՍՏԵՓԱՆ ԻՓԼԻՔՃԵԱՆ

( ԱՅ ԵՕՐԿԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՒՂՂԱԿԻ ՓՈՂՈՑԻՆ ՄԷՋ )

Պատիւ սնի ծանուցանել Արգոյ հասարակութեան՝ թէ Փետրվար 6 է սկսեալ իւր մեծ վաճառատան մէջ, շատ մը բարեկամներու փափաքին զօհացում տալու համար, կանգունի ձիւղ մը հաստատած է, ճօխ բրգեղնի, խասայի, ֆանէլայի, լինոյի, ճաշակաւոր պասմաններու, ֆօտարացոններու ևն. ևն. տեսակներու անմրցելի և խիստ ածան զիններով:


## ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԹԼԿԱՏԻՅԻՆ	ՏՕԲԹ. Մ. ՎԱԶԷ
Յ. ԱԼՓԻԱՐ	Գ. ԽԱՆՃԵԱՆ
Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	Տ. ՊԱՂՏԻԿԵԱՆ

ԵՒ

ՏԻԿԻՆ Ի. ՄԻՆԱՍԵԱՆ  
Թարգմ. ՄԻՇ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆԷ





ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՅԵՐԿ ՏԱԿԹ

3 ՄԱՅԻՍ 1906

ԹԻԻ 19

### ԻՍԿԻԻՏԱՐՑԻ ՊԵՌԱՆԺԷՆ

**Ա**ՆՏԵԱՆ, տարի օգտախոսութեան համար Եգիպտոսէն Իզմիր  
բերած էին քեռօրդիս, հինգ տարու սիրուն, չափ սիրուն աղեկ մը:  
Իրիկուն մը սեղանին եզերքին կռթնած՝ զէզ մը լուցկիով քաներ  
մը շինելու կ'զբաղէր:

— Հազար անգամ չե՞մ ըսած քեզի, Արամ, որ լուցկիներով չի  
խաղաս, գիտել տուի իրեն:

— Չեմ խաղար կոր, մօրեղբայր, Իզմիր Բիրաւիս չիկայ, Բիրա-  
ւիս կը շինեմ կոր:

Իր այս անուշիկ բայց վիթխարի աղայամտութիւնը անանկ ա-  
հագին քրքիջ մը արձակել տուաւ ինծի որ ձեռքէն թողուց լուցկի-  
ները եւ կատուի ու ալուր կնկան շարժուածքով մը եկաւ գիրկս  
'նեաուիլ' հան փնտսելու համար մօրեղբոր մը կաթնօղին զգու անքները:

Մասներս մխրճեցի իր խարտեաչ խոպոտներուն մէջ եւ գուր-  
գուրանքով ու տեսակ մը հպարտութեամբ իմ ամենէն խոշոր ամե-  
նէն անկեղծ համբոյրս զրի իր մանկական ճակտին վրայ Հպարտու-  
թեամբ, այժմ, որովհետեւ ամեն մարդու արուած չէ հինգ տարու  
քեռօրդի մը ունենալ որ փոխանակ չօքոլայի կտոր մը կրծելու...  
Փարսա ունեւրը supplanter ընելու, ծրագիրներ ունի իր ճնշողուկի  
զլխուն մէջ:

Տարի մը ետքը, նոյն քրքիջը արձակել կուտայ ինծի . . . Թաւ-  
շանճեանի վերջին յօդուածը:

Իւսկիւտարցի Պետրոսովն, պարտոյ խօսքի այդ իշխանը, մանկա-  
կան ամբարտաւանութեամբ մը կը ծանուցանէ թէ *trusi* մը կազմե-  
լու վրայ է, արդիւիւիւ. համար զիս որ այսուհետեւ յիշան թաց գրա-  
կանու թեամբ չզբաղիմ:

Արամն է որ Բիրաւիսներ շինելու կելլայ կոր . . . :

Ինչպէ՛ս կուզէք որ չի խնդամ:

Իր ամբողջ Թաւշանճութեամբը, ասկէ աւելի *absurde*, ասկէ  
աւելի *ridicule*, ասկէ աւելի խնդալիք բան մը երբէք ըսած չէր այդ  
Մեկենասը . . . Մասխախն:

Արգիլե՛լ զիս գրելէ . . . բայց մարդս այդ *oupein* ունենալէն  
եաքը, ինչո՞ւ նսնեւ չի հրամայէ արեւին որ չի փայլի, երկրիս որ  
չի զսննայ, ծաղիկին որ չի բուսնի, հովին որ չի փչէ:

Որքան ատեն որ մեր Վեհափառ Կայսրը, իր անսահման լուսա-  
մտութեամբ եւ կրթասիրութիւնովը թոյլատրած է մեզի մեր գրչին  
վաստակովը ապրիլ, Թաւշանճեան մը, հակառակ իր հինգ հարիւր  
հազար տղարնեբուն՝ դատապարտուած է իր այդ չար խորհուրդը  
սնուցանել փորին մէջ, իրրեւ պարզ նապիւս մը, իրրեւ ծիծաղելի  
*marotte* մը:

Ուշագի, կէօրտէգի, Իսրահանի գորգեր ծախելէ եաքը, կարգը  
եկած կը համարի քիչ մըն ալ բարոյական ծախելու . . . Տիգրան  
Արփիարեանն ալ իրրեւ միջնորդ գործածելով . . . :

Ի՞նչ կատակերգութիւն, Քսան տարիներէ ի վեր որ գրականու-  
թիւն կընես, հիմայ միաքը կուգայ թէ ըրածս անբարոյական գործ  
մըն է:

Շատ ուշ կարթննայ կոր:

Մինչեւ որ իր ջիղերուն չի դգայ՝ մարդերուն լաւագոյնն էի ի-  
րեն համար, բայց այն օրէն որ հասկցուցի իրեն թէ գրական հրա-  
պարակին չէր կրնար տիրանալ, ինչպէ՛ս տիրացած ըլլալ կը թուի  
խաղիի հրապարակին, կրակ կտրեցաւ մարդս, շանթեր արձակեց,  
պոռոց, կանչեց, ագեղ զարթնում մը ունեցաւ եւ բզբատող ակ-  
ուաներ գոյց սոււաւ ինծի:

Կատուներն ալ ասանկ են, ձայն չեն հաներ որքան ատեն որ  
պոչերնուն վրայ չեն կոխեր:

Շատ ատորնացուցիչ բան պիտի ըլլար ինծի համար նստիլ  
եւ գրականութեան վրայ վիճարանիլ ճիճիլի լաճատականի մը  
հետ:

Սիմօնիկ Ալաճաճեան մը երբ լիտի անուանեց ըրած գրականու-  
թիւնս, մտքէս չանցաւ նոյն իսկ ինքզինքս պաշտպանելու փորձեր  
ընել: Թաւշանճեան մը իմ սովորական անտարբերութենէս սաչա՛փ  
չի կրնար շեղեցնել:



Երբ գաւառներու ամենէն մութ անկիւնէն սկսեալ մի չեւ թաշանճեանի զրասննակը ի նիւ-Յօրք, առաջ առաջ իմ յօրուածս կը կարդան, երբ հաջարաւոր ընթերցողներ տմեն ամթիւ իրենց զմայլանքը եւ համակրու թիւնը ցոյց կուտան, երբ լրագրագետները անկեկն շատ իմ յօրուածներս կը վճարեն, երբ ասոնք կը կարդացուին, կը փնտաւին եւ ձեռքէ ձեռք կը յափշտակուին, այս ամենը գրական սպասցոյցներ են որ իմ ըրած գրականութիւնս գոյու թեան իրատունք ունի եւ պէտք է որ մնայ:

Երբ հանրութիւնը կուգէ, կը վնասէ եւ կը հաւնի Պ թաշանճեանի ասարկութիւնները ինքնին շուրջ կիջնան եւ ես զործս կը շարունակեմ:

Մայր վարժարան մը շինելու չափ դիւրին չէ քանզի՝ առանկ հասաատուն հիմերու վրայ գրուած համբաւ մը:

Ամբողջ ազգը՝ վաթսուն սակիով գինեմոյութենէ կրնայ վազ անցնել առլ բայց առանկ մէկ երկու յօրուածով չէ որ իմ սիրած գրացանութենէս պիտի կրնայ վազ անցնել առլ դիւ Պ. թաշանճեան. կզգամ թէ ամբարտաւան, անպատշաճ բաներ կըսեմ կոր եւ չի վայլեր պարկեշտ մարդու մը ինքզինքը զովել այսքան վրան բաց եւ անպատկառ կերպով:

Ինքնագովութեան այս ձեւը իբմէ սքովեցայ եւ Պ. թաշանճեանի բեզուն է որ կը գործածեմ կոր: Եթէ ըրածս յանցանք է, թող առաջին քայր ինք նեաէ:

«Փոխանակ կիներու վրայ գրելուն՝ թող իմ վրաս գրէ» կպաշարկէ Պ. թաշանճեան:

Կործին կուրոյ ատիկայ, գիտեմ. արապըն տէրտի իրուրը բայուն:

Իբրեւ պատիժ, կընգունիմ որ պատիժ մըն է այց եւ ծանր պատիժ մը:

Տարին տասներկու ամիս թաշանճեանը ունենալ իրրեւ նիւթ . . . *Oh, non, merci*

Այ մամանակ ունիմ եւ ոչ այ ակորժակ, յետոյ պէտքն ալ չեմ զգար Պ. թաշանճեանի բացաարկելու թէ իմ ըրած գրականութիւնս այնքան հեռի է անբարոյական ըլլալէ որքան հեռու է ի սկիւտարը նիւ-Յօրքէն:

Իբմէ շատ աւելի խեղանի իբմէ շատ աւելի հեռու իբմէ շատ աւելի պարկեշտ, իբմէ շատ աւելի հարուստ, իբմէ շատ աւելի զարգացած անձնաւորութիւններ զիս քաջալերում եւ խրատում սքմ են քանսմ ճամբուս մէջ:

Գրէ՛ միշտ գրէ՛ կրենն ինծի, Աստուծէ վեր սակայն, խիզ՞ն կայ որ երբէք զբացուցամ չէ ինծի թէ անպարկեշտ շան մը կրնեմ երբ կը նկարագրեմ միտի կուրծք մը եւ կամ կնկան մը գեղեցիկ սրունքները:





Չէ՞ք կարծեր թէ պատուաւոր վաճառական մը, յարգուած անձնաւորութիւն մը ինչպէս որ է Պ. Թաւշանճեան, քիչ մը աւելի լուրջ ըլլալու է երբ գրելը ձեռք կաննէ:

«Եթէ պէտք ըլլար՝ հօս կրնայի տալ յոյժ յարգուած եւ հանրաձանօթ անձնաւորութիւններու անուններ, որոնց հետ թղթակցութեան նիւթ ըրած եմ նոյն այս քրոնիկագրին զրչին աղտոտութիւնները զսպելու կամ գէթ չէզոքացնելու համը ըրած առաջարկութիւններս, պատրաստակամութիւն եւս յայտնելով գրեւորութիւններ ընկերո՞ւ:»

Հետաքրքիր եմ գիտնալու թէ Պ. Թաւշանճեանի գրեւորութիւններ ընկերո՞ւ պատրաստակամութիւնը մինչեւ ո՞ր աստիճանը կրնայ երթալ:

Վարկեան մը չեմ տարակուսիր թէ ոչ ֆանդէզի մըն է գրածը եւ ոչ ալ կատակ մը:

Պ. Թաւշանճեանի՝ *l'espoir* ունեցող վաճառական մը, որ տեսած խօսքիւն ինչ կարեւորութիւն ունենալը մեզմէ սորվելու պէտք չունի, անշուշտ պատրաստ պիտի գտնուի յարկելու իր ստորագրութիւնը երբ գինքը *au pied du mur* գնենք եւ խնդրենք իրմէ որ գործադրութեան գնէ իր խոստումը:

Արդ, սիրելի Պ. Թաւշանճեան, քանի որ աչք առած էք զոճողութիւններ ընել պայմանով որ գաղբիմ այլեւս գրելէ, եկէք գիմացի դիմաց նստինք եւ հանրութեան առջեւ սակարկութեան մտնանք:

Կը հաւանիք, չէ՞:

Քանի որ համոզուած էք թէ ամբողջ ազգ մը կանրարոյականայ կոր յօդուածներուս կրեսէն եւ ամիկայ ձեղի չափէ աւելի մը տասնօրութիւն կրպատածուէ, շատ գիւրին միջոց մը կայ գործը կարգադրելու:

Ես, Քրիզանթէմ՝ ծառանից, կը խոստանամ եւ կերպում այլեւս գրել ձեռք չտանել եւ բոլորովին քաշուիլ գրական հրատարակէն, պայմանաւ որ վճարէք Իզմիրի ազգային մատուկին պարտքը քրոքանակը Առաջնորդարանին կրնոք հատկնալ:

Անձիս համար որեւէ հատուցում չեմ պահանջեր:

Ծննդավայրիս օգտակար եղած ըլլալու գոհունակութիւնը հարստութեան մը հետ չեմ փոխեր:

Ինձ անձնաւորութիւններու հետ թղթակցութեան մէջ մտնելու պէտք չկայ այլեւս, ճամբան ցուցուցի ձեզի:

Չեր պատիւը, ձեր խիղճը, ձեր ստորագրութիւնը արդէն պիտի ցուցունեն ձեզի ձեր բռնիւիք ու զգութիւնը:

Խոշոր խոշոր ջարդելը մարիփէր չէ:

Եթէ հաւատք ընծայենք ձեր գրածներուն, Իզմիրի Առաջնորդարանի պարտքը վճարել գաւաթ մը ջուր խմելու չափ գին ընելու պէտք է ըլլայ ձեզի համար:

*Pas des paroles, des faits.* Եթէ երբէք տաջարկութիւնս իրակա-  
նանայ, գործադրուելի զուք՝ հայերուն միակ *gentleman* մարդը եղած  
պիտի ըլլաք, իսկ ես, եթէ ոչ հայերուն ամենէն մեծ գրագէտը՝  
բայց գոնէ ամենէն անձնուէրը:

Յանուն Աստուծոյ Պ. Թաւշանճեան, զիս պղտիկ մի ձգէք:

Յ. ԱԼՓԻՍԻ

## Ի ԲԵՐԱՆՈՅ ՔՈՒՍՄԷ . . .

«ՄԱՍԻՍ» Ի ԽՄԲԱԳՐԻՆ

Մասիսի խմբագիրը եւ Պ. Թաւշանճեանի ձօխ . . . բաղուելը Պ. Տիգրան Արփիարեան, իր Մեկենասի գրածին ոյժ տալէ աւելի անոր  
աչքը մանկու փափաքով խեղկատակօրէն այլանդակ յօգուած մը  
թխամած է ճիշտ անոր քովիկը որու մէջ կը յայտարարէ թէ «թերթ  
մը բան մը չէր կորսնցնել, ինչպէս փորձը մենք իսկ տեսանք վեր-  
ջին գրեթէ մէկ տարուան միջոցին», հրամարելով հիւրընկալելէ  
գրուածքներ որոնց մէջ պարկեշտութեան սահմանները ոտնակոխ  
կըլլային»:

Իրա՞ւ:

Ապացուցանելու համար թէ որքան ինքզինքին կը հակասէ, թող  
ներուի ինծի հրատարակել իր նամակներուն մէջէն քանի մը հաւ-  
ուածներ որոնք պիտի ցոյց տան թէ ինչ տեսակ *caméléon* մը դար-  
ձուցած է զինքը հարուստ մարդու մը հետ վերջերս հաստատած  
բարեկամութիւնը:

Կը դաւիմ միայն որ ստիպուած եմ այսպէս շարժիլ իր ըրած  
վայրարանութիւններուն վերջ մը գնելու համար:

Միեւնոյն ատեն շատ զժուարս կուգայ կար յօգուածներուս  
*réclamation*ը ընել այն ձևով որով *Scott* իր *Emulsion*ը կը դովէ եւ *Pink*  
իւր դեղահասերը:

Բայց սկսինք:

Քաղցում իր 1905 Մարտ 23ի նամակէն:

«Ըրկամ յօգուածիդ ամբողջութիւնը դիւտ մըն էր և իւրաքանչիւր մասնիկը մէկ  
մէկ *esprit*. Երբ ես՝ իբրև վարիչը կամ խմբագիրը Մասիսին կը նպարտանամ բու-  
այդ կարգի գեղեցիկ գրուածքներդ հրատարակելուս, զուն՝ յօգուածագիրը կամ ճեղի-  
նակը՝ որբա՛ն աւելի գոն կը մնաս արդեօր: Շարքովէն կիրակի, տունս գրասենեակ և  
խմբագրատուն չի կար — ուր որ Մասիս կընդունուի — Քրիզանթէմին խօսքը չե-  
զող, համակրութեամբ բնականորաբ:

Կը շնորհակարտմ զրեզ բարեկամս, գրական այս յաջողութիւններդ համար և  
կը մաղթեմ որ միշտ Թարմ մնան միաքզ ու զրիչդ»



1905 Մայիս 9-ին կը գրէ:

«Փարնան երկուշաբթիները զեղեցիկ են, զիտես, ու մարդս աւելի զուարթ կըլլայ՝ երբ ստանայ իր սպասած մէկ բանը: Ես, ամէն բանէ առաջ բա յօղումով կապուէի զոր տղի, նաճոյքով կարգացի և խելոյն յանձնեցի սպասումն: *Merci!* Շատ սիրուն էր ու *espritué*. Երեսուցամ յօղումս որուն մէջ տող մը, բառ մը չի կայ յապուելիք: Մասիսի յառաջիկայ թիւը գրականագէս զեղեցիկ թիւ մը բնիկ մտադրած էի և բա յօղումով ալ մեծագէս պիտի նպաստէ այդ բանինն»

1905-ին 7 Յուլիս նամակին մէջ:

«Էրկու ամսուան դարձնումը կարճեմ բաւական եղաւ տչերդ ի վիճակի գնելու որ բանի մը ժամ գրասեղանիդ առջև անցնիս ու սիրուն բան մը գրես: Կենճարեմ ամբոն տարերուն պատճառով մեղիութիւնը և բեռարդիկ նետ սրտոյս և զբոսանք բնիկու ժամանցները. բայց ասոնց մէջանց մտնալու չէիր վազեմի բարեկամդ ու Մասիսը: Ե՞՞՞ Ես չեմ . . . «Վարիճեցի ապագայիս» և ոչնչս պարագային, ընթերցողներն են հարին դերը կառարարները»

Իր 18 Դեկտ. 1903-ի նամակին մէջ:

«Անշուշտ կը գրես ինձի թէ յառաջիկայ տարի պիտի ուզե՞ս շարունակել ձեզի ուղիսոց յօղումներդ: Աւելի տալու կարողեմիս ն չունին բարեկամս, և առած գինս արհամարհելի զուտար մը չէ: Ուրիշ ասեմ գրած եմ թէ, շա՛տ աւելի կարճեն գրածքներդ, բայց պիտե՞ս նեղիկ է:»

1902 եւ 30 նոյեմբեր թուականով կը գրէ:

«Յատուցիկայ շարժումն, թիւ 49 Մասիսին պէտք է որ նապիես յօղումով արդէն այս որումն թիւը չոր էր յաջորդը պէտք է քրիզանձեմով մը օժտուի»

14 Դեկտեմբեր 1902.

«Դեկտ 4/17 ամսամիւ նամակդ շատո՛նց ատած եմ ու ամէն ատու խրիկուն կը սպասեմ զ՝արդ ու փուշ յօղումով որ չի՞ գար: *Anne, ma soeur Anne, vois-tu venir quelque chose?* կը հարցնեմ ես ինձի, «Մասիս»-ի վերջին բիւնրը ես գրասմեկերով զեղեցիկացներու անապարտեմիս մէջ»

4/17 Յունվար 1903.

«*Merci!* յօղումով ժամանակին նապիելուց համար, թէ և ծայրը նարին և *mille compliments!* մէջը փաստացոյ-*espritué* ու սիրունութեանը համար: Շա՛տ յաջոյ էր, և կը կարճեմ թէ, Պոլսանայ շնամիտներու շքանակներուն մէջ, Ծնունդի այցելութեանց միջոցին զուն և այդ ստանաւորը պիտի ըլլար որումն խառնկու-թեան նիւթը»

1903 Մարտ 2-ին:

«Կարելի չէ՞ր արդեօք բարեկամս որ երկու շարժումն մէջ . . . մէկ գիշեր մը գտնէիր Մասիսին յօղումով գրելու համար. կարճ, կարճեմ. իմ գործս էջա՛տ անկարկայ կը նկատես կոր, յայտնի է. մինչդեռ մարդկ յառաջին արտայտումները և զրջիկ խնամքը կը վերագանես «չրեւելեան Մամուլ»-իս: «Այն ընդ սկան» նորա-

վէպդ, օրինակի նամար վիպական ու գրական հրաշակերտ մըն էր: Երկու անգամ է որ Մասիսին յօգուածներդ հապճեպով կը գրես կոր: Գուն Մասիսին փայլն ես, մեղք է թերթիս:»

**1903 Մարտ 18ին. Լրագիրներու մրցումին վրայ խօսելով կը խոստովանի թէ՛**

«Իրաւ է թէ գերմարդկային ճիգեր կրնէին կոր աշխատակիցներս իրենց կողմը դարձնելու, գէթ մէյ մէյ յօգուած իղելով անոնցմէ: Բայց ես միշտ ունիմ ինծի սիրելի գրագէտներու խումր մը որոնց մէջ **առաջինը կը մնաս դուն:**»

**1903 Մարտ 4ին:**

«Ես ինքս ալ կը պատրաստուէր արդէն քեզի գրել այսօր արձագանքը ըլլալու համար այն հիացական ապագայութեան զօր վերջին յօդուածդ առաջ բերաւ Պոլսոյ ընթերցողներուն վրայ: Ետքում օրէն ի վեր՝ Մասիս կարգացող մը չի կալ որ յօդուածիդ վրայ չի խօսի գծաւանքով: Որչափ ալ սր կ'զամ *compliments*: Երբ բու հասցէիդ են, առով հանդերձ ես ալ իմ հպարտութեան պզտիկ բաժինս կ'ունենամ անոնցմէ: Շնորհակալ էմ, բարեկամս, և աւելցնեմ որ մինակ գրագէտ դասակարգը չէ, ալ ամէն ընթերցող, ազգիկներ ու կիներ ալ որչափին՝ որ հանդիպեցայ շտրած օրուրէն ի վեր:»

**1|14 Նոյեմբեր 1902.**

«Տիեմիկով յօդուածդ հաւանովի չափ կար շա՛տ զեղեցիկ էր: Պիտի հրատարակեմ Մասիսի 45րդ թիւով, առանց որ և է յապագաման կրնաս վստահ ըլլալ: Անկեղծապէս շնորհակալ եմ քեզ աշխատակցութեանդ համար որ կը գնահատուի Մասիսի բոլոր ընթերցողներն:»

**18 Մայիս 1903.**

«Հինգ օր Բարսեղիմուդ անոնի *sensation* ըրաւ ու հաւնուեցաւ, որ մոռցայ ուրիշ ամեն յօդուած, սքանչելի էր պարզապէս:»

**Միևնոյն նամակին մէջ:**

Հետաքրքիր եմ թէ վաղն առաու հասնելիք Արևս Մամուլին մէջ ի՞նչ ունիս և այս հետաքրքրութիւնը: Բնդնանուր է հոս, եթէ նիւթական վիճակս ներքեր որ ամէն շարժու Մասիսին մէջն ալ քեզմէ յօգուած ունենայի՜ . . .

**18 Յունուար 1903.**

Յօդուածիդ ձևաղլորը երկու անգամ կարդայի շատ սիրուն է: Ճիշտ իմ ուզած *genre*-ս յօդուած: Թիւ 4 Մասիսին վայրը պիտի ըլլայ, մեղք որ այսօրուան Մասիսին չի հասցուցիր ի՛նչ և է:

Կարճեմ թէ այսօրանը կը բաւ է:

**Յ. Ա Լ Փ Ի Ր**



# ՆԱՍԱԿՆԵՐ ԱԹԷՆՔԷ

## II

21 Ապրիլ

Հարաւի կանխաճանա գարունը Աթէնք ալ մտած է; վարդերու, անէմոններու, մելիակներու մի հոյլ, ամեն ակտակէ եւ ամեն դոյնէ, կը պծնեն հասարակաց եւ մասնաւորներու պարտէզները վիլլաներու բարձր պատուհանները չըջափաղուած են հարաւի յատուկ մազըցող բոյսերու վաս կապոյտ ծաղիկներովը որոնք բէնաէլեան ամենաանբիծ մարմարին հետ մի հմայիչ ապուսրութիւն կը թալանէ Նարնջներներ, բարձրուղէչ եւ սակի պտուղներով բեռնաւորուած, երբեմն նաեւ ցանուած անհամար խնկարոյր ծաղիկներով, խիտ կարգերու մէջ կը պարփակեն չքեղ ասուները եւ մի անասելի հաճոյքով կը զիտեմ հոս բուսական աշխարհի կողմէ պարզուած այս անտղար ճոխութիւնը. Աքասիաները արգէն ծաղկած են, սօսիները կը բողբոջեն, թիկնիները ակնապարար կանաչով ծածկուած են, իսկ նուրբ եւ երկնուղէչ նոճիները, մերթ առանձին, մերթ փոքրիկ պուրակներ կազմած, մութ շոճիներու, գափնիներու եւ մրտենիներու հետ մի շատ ազդու հակապատկեր կը կազմեն իրենց սպիտակ շուրջքին հետ. Երեկոյեան առաջին ստուերներուն հետ կը լսուին արքայական պարտէզին թաւաքին մէջ սոխակին զեղզեղանքը. Աթէնուհիներ, զեղեցիկ եւ իրենց գարնանային թեթեւ արդու զարդով զուարթ, յպատու նուրբ եւ շատ ճապուկ զրեթէ ամենքն ալ թխտղէմ կը սահին կ'անցնին քովէս եւ մի պահ կը կարծեմ թէ ես հոս ամենագեղեցիկ երազներու աշխարհին մէջ եմ փոխադրուած. Աքսորիւսը, մաւրաղէմ եւ կիսաքանդ եւ սակայն դեռ անդիմադրելի կերպով հմայիչ իւր աւերներուն մէջ, ահա կը ծածկուի գիշերուան թանձր մութէն. Նա Նոն կանգնած էր իբրեւ մի անուրջ, իբրեւ մի ուրուական, զուրկ մտէ եւ կիտնքէ, ապշած եւ գրեթէ օտար սոյն քաղաքին մէջ որու պաշտպան աստուածուհին կրեց երբեմն իր գաղաթին վրայ եւ որ այժմ բոլորովին յեղաշրջուած կը զիտայ նոր ժամանակներու ամենատենդոտ կիանքովը.

Աթէնքի գլխաւոր փողոցները ելէկզրականութեամբ լուսաւորուած են եւ երբ անցնե՛ով Էոմիս փողոցէն սեանես մեծ ու չքեղ վաճառատունները կը կարծես գոնսուի եւ բոպական մի որ եւ է մեծ մայրաքաղաքի ամենափայլուն փողոցներէն միոյն մէջ. Այնքան հիմնապէս բարեշրջուած է քաղաքը վերջին տասնեակ տարիներուն մէջ. Ելէկտրական եւ շողեչարժ թոսմիէյներ, օմնիպիւսներ, կապեր եւ օթոմօպիլներ ման կուգան ամեն ուղղութեամբ եւ քաղաքին ամեն մասանց մէջ. Փողոցներուն մէջ կատարեալ մաքրութիւն

կը սիրէ եւ հասօյք կ'զգայ մարդ հոս ապրելով. Հսկայ հասարակօց շէնքեր, ինչպէս համալսարանը, գրաստանը, բազմաբուեապահան զարու-  
ցը, օբէոսան, թատրոնը, թանգարանները որոնք զրեթէ ամբողջովին  
արտասահմանի մէջ հարստացած Յոյն հայրենասէրներու նուիրատու-  
ութեամբքը հիմնուած են, կը բարձրանան քաղաքին զլիստ օր պողո-  
տաներուն մէջ. եւ այդ շէնքերէն ի բաքանչիւրին առջիւ կայ, նըս-  
տած կոմ կանգուն, բարերարին արձանը. Շատ աչքատու է այն  
մեծ շտիր որով հին Հէլլէններու զեղարուեատական հակու մը փո-  
խանցուած է նորերուն վրայ, վասն զի շահուելով իսկ այսօրուան  
հէլլէն արուեատագէտներու մեծ թիւը, որոցմէ ամանց կը պարտի  
Աթէնք իւր ամենագեղեցիկ քառթիք յիշատակարաններու շտանքը,  
տուե արական գասակարգն ալ կը սիրէ եւ կը պաշտէ ինչ որ կը  
վերարերի հին դասական աշխարհին. Այսպէս. Բալլաս Աթէնէի,  
Հէրմէսի եւ Տիսանաի մարմարէ, գածէ կամ պղնձէ արձանները եւ  
արձանիկները կը զարգարին բոլոր մեծ խանութները. Նոյնպէս մեծ  
յարգանք կը յայտնուի հէլլէնական զարութեանց հին ներկայացու-  
ցիչներուն եւ շատ փողոցներ կը կրեն Սօկրատի, Պլատոնի, Արիս-  
տատէլի, Քսէնոփոնի եւ անունները. Հոս ամեն քայլափոխիզ կը  
տեսնես հնոյն վերակենդանացու մը, վերակենդանացու մ որ այնքան  
արգասաւոր եղած է զեղարուեատներուն համար եւ որ միանգամայն  
այնքան ներդաշնակօրէն յարմարած է ներկային ոգոյն եւ պահանջ-  
ներուն:

### III

22 Ապրիլ

Աղաթիծը մի վեհայանն տեսարան կ'ընծայէր այսօր. Այ թէ  
միայն անոր ահալին անջրպետը հանգիստականերով խիստ առ խիս-  
լցուած էր, այլ նաեւ այն բլուրը որ Հիմէզօսի գէպի քաղաք ա-  
մենայառաջացած մասը կը կազմէ, ծածկուած էր մարդոց մի մութ  
ամպով, որոնք այդ բարձունքէն գէպ ի վար կրկէսը կը նայէին եւ  
հոն կատարող հանգիստարութեանց թեանց թերեւս լաւագոյն կերպով  
կարող կ'ըլլային հետեի լը քան Աղաթիծի այցելողներէն անոնք  
որոյ չար բազըր զիրենք նեւած էր ամենահեաւոր աստիճաննե-  
րէն միոյն վրայ. ներկաներու թիւը կը հասնէր 80,000ի եւ այսպէ-  
սով Աթէնքի բնակչութեան գրեթէ կէսը հոն Աղաթիծի մէջը եւ  
մօտը կը գտնուէր. Այսքան խուսնեւամ լազմութեան ընծայած  
տեսքը խորագէս ալլու էր եւ բոլոր անոնք որոնք այսօր հան-  
գիստարութեանց բացու մը տեսան, մի անջնջելի յիշատակ պիտի  
դահնն անոր մասին իրենց կեանքի ամբողջ տեսողութեան մէջ.  
Արքայական պալատէն կառքերու մէջ հասան Էտուրմաի Գէորգ  
թագաւորները, երկու թագուհիները իրենց բոլոր հետեւորդներով  
որոց մէջ էին իշխաններ, բարձր զինուորականներ, նախարարներ,



զանազան երկիրներու մարմնամարզիկ ընկերութեանց ներկայացուցիչ խումբեր, որոնք յատկապէս եկած են հոս մասնակցելու համար Օլիմպիական խաղերուն։ Յոյն մարմնամարզիկ խումբը, 12 անձերէ բաղկացած, բացման կարճ արարողութենէն յետոյ որ կատարուեցաւ Անգլիոյ թագաւորին կողմէ, սկսաւ իր մարզանքը կըրկէսին մէջ դրուած զանազան գործիքներու վրայ (Թռարէզ, սանդուխ եւ)։ Այս մըն բոլոր անդամներն ալ սիրուն, թխադէմ պարմաններն են, զրեթէ ամենյն ալ միջանասակ եւ բարեկազմ, շատ հագուել իրենց շարժումներուն մէջ։ Երբասարք Գանու հիներու մի երկոստասնեակ որոնք իրենց սակի մազերով մի կատարեալ հակապատկեր կը ձեռացնէին իրենց սեւահեր հէլլէն մրցակիցներուն հետ, շատ ծախահարուեցան իրենց ճարտար խողերուն համար նոյն գործիքներուն վրայ։ Սակայն 18 ղետահաս զանիացիներու խումբը այսօրուան զափնին խլեց իր արասկարզ յաջողութիւններով եւ իր բնավայրը սրտաւով ծածկեց Ատղիկաի հողին վրայ։ Ամենէն վերջը եկան 12 գերմանացիներ, որոց խաղերը յերասի շատ գեղեցիկ էին, որոնք սակայն չկարողացան ցոյց տալ մարմնի այն ապշեցուցիչ ճկնութիւնը որ յատուկ էր իրենց զանիացի նախընթացներուն։ Մրցանակներու բաշխման յանձնատուղովը կոնսպանդին իշխանի նախագահութեամբ ուշադիր կը հետեւէր իւրաքանչիւր մրցակցի մարզերուն եւ զիտողութիւններ զրի կոսնուր ասոնց վրայ։ Ժամը յին ծրագրին այս օրուան մասը վերջացած էր եւ երկու Թագաւորները եւ Թագու հիները իրենց հետեւ որդիներով վերադարձան Պաւլատ։ Ժողովուրդը տակաւ առ տակաւ թողուց Սթափօնը եւ մարդկային հոսանքներ թափեցան Աթէնքի գլխաւոր փողոցներուն մէջ յամբ յամբ յառաջանալով դէպ ի Սրտակցութիւն կոչուած հրապարակը ուր ցրուումը կտրելի եղաւ։

Բաղաքիս հնախոսական թանգարանը զոր երէկ այցելեցի, շատ հետաքրքրական ատարկաներ կը պարունակէ եւ կ'արմէ անանել երբ մարդ Աթէնք եկած է։ Ուշադրութեան ամենաարժանին թերեւս Բալլաս Աթէնէի մարմարեայ արձանն է, մի հստակական նմանութիւն Ֆիաիասի հրաշակերտին։ Խոր պատկասանքով մարդ կանգ կ'առնու այս գրեթէ մի մէթը բարձր եւ զրեթէ բոլորովին անազարա մնացած արձանին առջեւ եւ զայն մանրակրկիտ նկատողութեան կ'ենթարկէ։ Ունի Մինէսլափ ճանսթ գլուխը ծածկուած մի սազաւարտով, մեծ նշածեւ աչքեր, ուղղանկիւն քիթ եւ ուժեղ բոլորակ զունջ։ Աջին մէջ կը կրէ նիզակը, ձախովը փահար։ Եւ որքան ուշադիր կը քննեմ Բալլասի զիմպօսները, նոյնքան աւելի պայծառօրէն կը յայտնուի ինձ, թէ անոնք զեռ այսօր ալ յոյն կիներէ ոմանց վրայ կ'երեւին, թէեւ զուրկ այն իտէալ կատարելութենէն զոր արուեստագէտը իւր ձեռակերտին առւած է։ Այսպէս, օրինակի համար, կը յիշեմ մի ֆիոսցի երիտասարդ աղջիկ որ շատ ատրիններ առաջ մեր

տան մէջ կը ծառայէր եւ որո՛ւ կանուսա որ դիմադծերը, հանդարտ մի քիչ ցուրտ սակայն կորովի նայում քը, մեծ նմանութիւն ցոյց կու տային մի մինչեւսինան զլիսի հետ. նոյն բանը դիտեցի նաեւ Սթաւրոսի մէջ Հէլլէնոսիներէ ոմանց վրայ, որոց նմանութիւնը Քալուս Աթէնէի հետ այնքան աւելի մեծ էր, որքան անոնք իրենց հասակով այ աւելի բարձր եւ ուժով էին, հակառակ յոյն կամանց միջակ ակպին որ փոքր եւ փափկակազմ է. Դասական դիմադծերու այս զուգահեռութիւնը հզօր մարմնի հետ դիս սա մտածմանը առաջնորդեց թէ Ֆրախաս իւր Մինէովան լո՛կ իւր երեւակայութեան չտանդոնեց, այլ անոր նախատիպարը արդէն գտաւ ժամանակակից Հէլլէնոսիներու մէջ եւ զայն միայն այն պատճառաւ նախընտրեց, վասնզի մասնաորայէս այդ ակպին վրայ գտաւ մի յաջամարտիկ պաշտպան Աստուածուհւոյ իտէալին մարմնացու մը—այլապէս է մարմարէ պատրաստուած մի Մինէովան զլուսի որ թէեւ ժամանակէն բաւական խաթարուած է, սակայն Աստուածուհւոյն կորովի արտայայտութիւնը վարպետօրէն եւ շատ կենդանի կերպով ի տես կ'ածէ:

Շատ գեղեցիկ է Հէոմէսի պղնձածոյլ արձանը բնականէ մեծ համեմատութիւններով, գտնուած գրեթէ անաղարտ վիճակի մէջ—Մի հալ հին հողէ ամաններու որոնց վրայի նկարները մասամբ լաւ պահուած են, մասամբ անհետացած, մեծ եւ չքեղ չիրմաքարերու եւ բազմազգի վարդ—առարկաներու կը գտնուին այս թանգարանին մէջ եւ թէեւ Կ. Պօլսոյ Կայսերական թանգարանին մէջ ցուցադրուած նոյնտեսակ հաւաքածոյէն թուով գերազանց չեն, սակայն իրենց պէսպիսութեամբ ինձ աւելի ճոխ լինել իր թուին եւ այս պատճառով իսկ ուշադրութեան ոչ նուազ արժանի. — Վիէննա ճանչցողին վրայ շատ հաճոյ սպաւորութիւն կը թողու Աթէնքի զեղարու ետափց Ակադէմիան զեղեցիկ շէնքը որ իբրեւ գործ Հանսօնի, Վիէննայի խորհրդարանին ճարտարապետին, միեւնոյն սճով շինուած, սակայն շատ աւելի փոքր է. — Հոյակապ են Մինեալաի եւ Արթուրոի վիթխարի արձանները, արդէ հէլլէն արուեստագէտներէն միոյն ձեռակերտները, որոց իւրաքանչիւրը գտաւ սիւնի վրայ զըրուած է եւ միասին Ակադէմիոյ շէնքին արտաքին ամենագեղեցիկ դարպը կը կազմեն. Սակայն այս շէնքին ներսն ալ ի հանդէս կուգայ Վիէննական արուեստը յանձին Վիէննացի նկարչին, Կսիքքիքէալի, որո՛ւ մի մեծ պատկերը Տիտաններու պատերազմը Արամազդի հետ սրահին պատերէն մին կը ծածկէ. Ասոր հանդէպ կ'երեւի մի այլ պատկեր նոյնքան մեծ, Մինեալաի ծնունդը ներկայացնող. Միւս պատերը կը զարդարեն մի քանի ուրիշ պատկերներ որոց նիւթը առնուած է Բուսթէթէոսի կեանքէն որո՛ւ կարեւորագոյն միջոցէրը սքանչելի եւ շատ ազդու կերպով ներկայացուած են.





Երկիրն է խաղաղութիւն մ'անասնան  
Կր անարածի գոշտին վըրայ տրամագին,  
Էւ համբոյզին զեփխաներուն ցուրտ հպման՝  
Կր ասորբուայ մեկտա սնորսան երկինքին:

Գժգոյն, անգայտ, նորք գողաակաւքն ամպերուն  
Կր շողշալի վերջարցոյի ցոյհերէն,  
Ու հծծիւններ, ձայներ ասարտամ, բրբրուսն՝  
Մբնորթտին մէջ կր րուչին մեղտօրէն:

Հեռուն հակայ լեւնաշրջրան կր պտակի,  
Մառախուղէ ծովն՝ իր աննան անկողին,  
Էւ զեռակին լայն ժապաւուն տրծարի  
Կր պղլլի բլուրներու լաւր կողին:

Կիրաւում է՝ օրհներգութեանց պահն անոյր,  
Կր ձայնարկին կոչնակները տրամագին  
Էւ խունկերուն ծխումները հաղցրարցոյ՝  
Կր լեցընեն մբնորթաը գիւղակին:

Մինչ կր ցընծայ իշատակը անունց օր  
Անհետացան անկ ճամբուն մէջ մըրին,  
Արցունք էւ սուգ, բանձըր յուրում մ'անաւար  
Կր համակէ մեր հոգիներն անձկագին:

Մայր-բնութեան մբուսնցները անհամար  
Կր գոշնակալին այս պահուն մէջ խոր խակմանց  
Ու կր հիտեն շարականներն անբազաւ,  
Ամբողջական Աղօթի մը երգն անունց:

Հանդուկան-ձերպարութեան պատկառտ  
Կր մասնակցի նաեւ էրբողն անանուն  
Ո՛վ Բընարիւն ընդունէ՛ իր վիներտ  
Պաշտամունքին հծծիւնները շրպրուն:

ԱՐՏԱԷՍ ՅԱՐՈՒՅԻՒՆԷՍ

## ՈՒԽՏԱԻՈՐՆԵՐԸ

Հասնականարար առաւելն շատ կանուխ մեկնած էին անոնք իրենց տուներէն դէպ ի ուխտասեղին, որ քաղաքին հանդիպակաց կողմը կ'դանուէր, եփրաաի եղերքը ցից բարձրացած ժոյսերուն կողերէն մէկուն ծոցը: Գարունէն սկսեալ, Լոյս աղբիւր — ա՛յս է ուխտասեղինն անունը կերթան քաղաքէն եւ զիւղերէն, մանաւանդ կիներ եւ աղջիկներ, իրենց ցաւերը հոն ձգելու եւ բուժումի ու բժշկութեան յոյսով կա դառնալու համար: Գարնան արեւը իր սակի վարսերը երկինքն ի վար թափած էր, ու եփրաա իր օձազըտոյս գալարումներուն մէջ հրճուանքի ժպիտ մը կ'հանէր զուրս իր կուրծքէն ու իր եզերքներուն վրայ: արծաթ փրփուրները կարծես առհաստաչեայ նշանն էին անոր ցնծութեան, խինդ ու խնծիղին: Լերկ ապառաժները միեւնոյն անտարբերութեան մէջ կարծես խորունկ կ'ննջեն, որոնց վրայէն տակաւին նոր անցած էին ձմեռը, բուքը, անձրեւը, ձիւնը, փոթորիկները եւ միթիւն ու գորչ ամպրոպները: Կենդանութեան որ եւ է նշան ցոյց չեն տար անոնք, կենդանական աշխարհի մէջ անզրդուելի անշարժութեան մասնուած, կարծես արհամարհոտ ակնարկներ կ'նետեն վարը հօտոզ գետին որ հազիւ երբեմն կը մոնչէ, վերը երկինքին որ կ'չողայ լոյսերու տեղատարափին մէջ: հետուն քաղաքին ուր մարդիկ կան ատուպոզ կամ վայելող, ծոյլ կամ աշխատող: Աշխատող գաշարն վրայ հակասութեան վիթխարի կոթողը կանգնած կ'երեւին, խորունկ մտածկոտ ձեւի մը տակ: Գիշերը անաւոր են, այլանպակ եւ ատասպելային ժամանակներու ուրուականներու ապաւորութիւնը կ'գործեն մտրդուս վրայ: Եւ սակայն իրենց յաւիտենական անշարժութեան մէջ դարձեալ վսեմութիւն մ'ունին, որ կ'հիւսցնէ եւ խորհիլ կուտայ գրած մը լսին ու խորունկ:

Ծասերը հողիւ ու բախութեան բաժին մ'ունին, անոյ զեփիւս մը զանոնք կ'չոյէ ու կ'վայփայէ, ու մեղամազձոտ աստանու մով մը ցնծումի երզը երզել կ'փորձուին աւետելու: համար դարնան վերադարձը, որ ա՛յնքան շքեղ է եւ փառաւոր: Ստտերը գետնին երեւը փոռած գորդ մը կ'ներկայացնեն, համակ կանաչութիւն, որոնք բանաէն արձակուածի երեսոյթը կ'ներկայացնեն ու երկար շունչ մը կ'աանեն, երկրին տակէն զուրս ցայտելով եւ անգիտակից պարը բռնելով արեւու ներգաշնակ ճառագայթներուն տակ սաք եւ ատրաշէկ: Սեւ ու գորչ քարերն անպամ իրենց անշարժութեան մէջ բան մ'ունին, որ կ'հիւսցնէ: ամէնքն ալ աղղեցիկ շունչ մը հագած կարծես, ամէնուն վրայ առ հասարակ բնութեան սակեճամուկ ձիւրանին ձգուած է արքայազայել: Ամէն տեղ խինդ կայ, ամէն տեղ



ժպիտ կ'նշմարես, ամէն տեղ ուրախութեան ազդակ մը կ'ըջի, նոր օրհներգութեան մ'ալելուսն կ'արձայնողէ: Բնութեան վերազարթնումին առնել, մեղք գոնէ արտաքինապէս եւ անբնօյժ կերպով մեռած եւ անշարժ երեւցած իրերն, ասարկանկրն, ժայտերն, քարերն ու ծառերն զարթնումի երզը կ'նշեցնեն ուրախ եւ զլուարթ: Միայն հետո՛ն, շատ հեռուն, լեւներու անմատոյց գազաթներուն վրայ ձիւնն իր սպիտակութեամբ կ'փալիլի, մաքուր ու անբիծ, անոնց բնական պաշտանքն է: Եւ որ կ'ըզայ, եւ որ կարծես իր մեկնելէն առաջ անգամ մը եւս ցոյց կուտայ անբժու թեան եւ սրբութեան անհրաժեշտութիւնը, որոնք միայն լեռներուն գագաթները կ'զրուեն ու արծաթի փայլունութեամբ եւ վճիռ յատկութեամբ կ'ըլչակնեն մեր սկար անտութիւնը: Զինսպառ կատարները լեռներուն խակապէս սքանչելի են մանուսանդ զարնան, որոնք վեհութիւն մը հազած կ'ներկայանան, եւ ուր արդարեւ հեշտին է գոնէ վայրկեան մը ապրիլ երկինքին քիչ մը աւելի մտա, ուր օդն ալ մարտը է, ջուրն ալ եւ վերջապէս ամէն բան:

